իջած Սամծելեֆ–ի, Դուրնա–Գէօլ–ի, Ենի–գեղի, Կոշքաշ–ի, Փիր–Եանոս–ի, Գէշման–ի, Կապֆ–ի, Քեալաշուտ–ի Մեգենֆ–ի, Ոգնաբադ–ի, Ջուլակերտ–ի, Հայդոս–ի (*նշանաւոր ջերմուկով*)․ Ուրեկ–ի [1], Փարքանց–ի, *վ․ եւ ս․* Փանազկերտ–ի, Արքունիս–ի [2], Քեամիս–ի, Ոլոր–ի *եւ* Այազ–ի *առ–րը*, *որոնք* խո–

[1] *Ուրեկ․ Փանազկերտ գաւառակի Սուրեկ սառուակի վրայ գտնւում է Սուրեկ գեղը, որ նախապատմական եւ պատմական շրջաններից անցած մի հին ամրոց է. լեռների վերջին ծայրին, մի բարձունքի գլխին։ Երկրա Սամերների Սոր եւ Սուրեք քաղաքները. Հալթալական Սուրգուր քաղաքը. Միջագետքի Սուրհան, կարս նահանգի՝ Զլդր Լճի ափի ապառաժների այրերի Սուրթան, Կլորջեթի ու խառատեղի՝ Սուրթա ամին, Մխցխայի ու խառատեղի Սուրամելը, Արխազեայի-Սոզում՝ Սուրթան, Կաղզուանի՝ Նշանաւոր Սուրքարը, Դաղստանի՝ Սուրալա աւանը, Կ․Պոլսի՝ Սուրվա աւանը․ Արդվինի Սուրծուման, Էրզրումի՝ Սուրը. Ուրմիա լիճն ու քաղաքը եւ բազմաթիւ գեղերի ու բերդերի անուններ ուշք են գրաւում, թէ արդեօք այս բոլոր Սուրանունները իրար մէջ կապակցութիւն չունի՞ն։ Արդեօք Փանազկերտի Սուրեկ-ը Սանասարի դաշտում Սուրեկի գոյութիւն ունեցած ժամանակը կա՞ր։ Մենք տեսնելով Կարսի, Բաթումի, Գանձակի, Բագուի շրջանի ՍՈՒ-ով սկսուած այդ գեղերը, համոզուել ենք այս եզրակացութեան, որ նրանք բոլորն էլ հին սրբավայր տաճարներ եւ ամրոցներ են եղել եւ կրում են նախապատմական շրջանից մեզ հասած ՍՈՒ անունը։*

[2] *Արքունիս․ Առաջին անգամը չէ, որ պատահում է. Բաբերդունի մօտ, Սպերում եւ Կիւկիւմանում էլ կան կործանուած Արքունիներ եւ սա էլ Փանազկերտ գաւառակի ափին մեծ աւերակների, բերդերի, ամրոցների, աշտարակների, տաճարների եւ ապարանքների փլատակների վրայ շինուած մի գեղ է, որի աւերակները ցոյց են տալիս նրա նշանակութիւնն ու անանկութիւնը։ Ինչպէս շատ այդ աւերակներն ասում են որ այդ վայրը մի ժամանակ արքաների կայարան է եղել. իսկ այժմ խեղճ ու կրակ թշուառների օթեւան։*